

արտավարի հող եւ հիւղիկ մը չէր ունենար. երիտասարդ մարդ ես եւ ազնուական, քաջ եւ կորովի, ծառայէ՛ ինձ հաւատարմութեամբ, ես զքեզ լաւ կը վարձատրեմ. տուն, տեղ, այգի կ'ունենաս եւ եթէ զիս գոհ ընես, ամրոցի եւ գիւղերու տէր նաեւ կ'ընես քեզ, բայց հայրենի ժառանգութեան եւ անցեալ անիրաւութեանց եթէ խօսքը կրկնես, գիտցի՛ր, որ չեմ կրնար ներել, զգուշացի՛ր...»։ Այդչափ փոքր առատաձեռնութիւն եւ այդչափ մեծ սպառնալիք իմ ախորժակացս յարմար չեկան։ Փոխանակ քեզ ծառայելու այդ գինով՝ կ'երթամ կայսեր կը ծառայեմ, ըսի մտքես, եւ անցայ Արածանին եւ Եփրատ, ճիշտ նոյն ատեն երկու բանակ իրարու դէմ կը գտնուէին, մտայ յունաց բանակը, եւ զարմանալի՜ յարմարութիւն։ Յունաց մեծ Սպարապետը ոչ միայն հայ մ'էր, այլեւ Մամիկոնեան էր. Մանուէլ զօրավար երեւելի իւր քաջութեամբ, որ զթեոփիլոս կայսրը ազատեր էր մահուանէ ու գերութենէ։ Երբ զիս տեսաւ տասնութ տարեկան անմօրուս տղայ մը, եւ հարցուց եւ իմացաւ իմ ազգս, պապս եւ քեռիս ճանչեց, նայուածքով զիս անգամ մը չափեց, ըսաւ. «Թեպէտ դեռ պատանի ես՝ բայց Արծրունեաց եւ Մամիկոնեաց արեան ծնունդ լինիլ եւ քաջ չլինիլ անկարելի է, քայլէ՛, որդեակ, բախտաւոր էլ ես, փառաց ասպարեզը՝ պատերազմի դաշտը առջեւնիս է ահա. դու խաչի կողմը կը գտնուիս, այդ նաեւ բարեբախտութիւն մ'է»։

«Երթանք Ռշտունեաց Ոստանը, երթանք ժամ առաջ դառնալու շուտով մեր նոր հայրենիքը Թորթում, ուր ամէն բան պատրաստեցի գեղեցիկ եւ վայելուչ քաղցրացնելու համար իմ Յեղիներիս այդ օտարութիւնը. ո՛հ, եթէ ինք նոյն սիրով, նոյն սրտով զիս սիրէ, ինչպէս ես զինք, անշուշտ ինձ հետ երջանիկ պիտի լինի, հեռի նաեւ Վասպուրական ծովուն եզերք են»։

Այսպէս ժամերով կ'երթային այս մեր հեծեալքը եւ Գուրգէնի լռութիւնը ամենուն լռութիւն կը հրամայէր. մանաւանդ օդին ցրտութիւնը ամենուն հոգին եւ ջերմութիւնը ամփոփելով ընտանութեանց համարձակութիւնը կը սեղմէր։ Բայց կար բան մը, որ կարելի չէր այդ վիճակը չընդհատել, եւ այդ բանը անօթութիւնս էր. ուստի, երբ Առաքելոց վանքն անցան, եւ Մորիսայ ճամփան